ՏԵՂԵԿԱԳԻՐ ՃԵՄԱՐԱՆԻ

1882—3 ուս. տարուայ

(ՏԷ՝ ՇՐՈՆԱԿՈՒՆ ՀԻԳԵՄԲԵՐ ԱՄՍԱԹԵՐԹՈՎ)

Անցեալ տեղեկագրիս մէջ զետեղուած ցուցակից երևում է, որ 1882—3 ուս. տարուայ սկիզբը պէտք է ժողովուէին Ճեմարան 157 հոգի. Սոցանից չվերադարձան 5ը. նոր ընդունեցինք — Ժառանգաւորաց Դպրոցից 35 գիշերօթիկ աշակերտներ, զանազան տեղերից 39 գիշերօթիկ և 117 երթևեկ աշակերտներ. ուրեմն ընդհանուր թիւ աշակերտաց էր յընթացս 1882—3 ուս. տարուայ 336, որոնցից 219ը գիշերօթիկ.

Մայիսին եղան հրապարակական քննութիւններ վարժոցի երրորդ բաժանմունքում, երրորդ դասարանում, վեցերորդ դասարանում և երրորդ լսարանում. իսկ միւս դասարանների մէջ դասերը շարունակուեցան մինչև Մայիսի 15ը և այդ դասարանների աշակերտները փոխադրուեցին իւրեանց տարեկան յառաջադիմութեան թուանշաններով.

Առաջին հարցաքննութիւնը Գ. լսարանում պատուեց իւր ներկայութեամբ Ամենապատիւ Բարձր Սրբազան Տեղակալ Հայրը, իսկ միւս օրերը ներկայ էին լինում միաբան Ս. Հայրերից ոմանք.

ՑՈՒՑԱԿ ՓՈԽԱԴՐՈՒԹԵԱՆ ԱՇԱԿԵՐՏԱՑ.

	Ուսանողաց	Ցրեցմամբ	Ցրեցմամբ	Ցրեցուցած կամ ցրեցուցած մասամբ հայրենի	Արտաքսուեցան դասերից	Ընդունուեցան դասերը տան	Վախճանեալ	Գումար
Երրորդ լսարանից	6	»	»	1	»	»	»	7
Երկրորդ »	»	10	»	1	1	»	»	12
Առաջին »	»	16	»	»	»	»	»	16
Վեցերորդ դասարանից	»	10	»	»	»	»	»	10
Հինգերորդ »	»	15	»	»	2	2	»	19
Չորրորդ »	»	10	»	»	2	7	»	19
Երրորդ »	»	25	3	»	4	4	»	36
Երկրորդ »	»	31	8	1	11	2	1	54
Առաջին »	»	26	7	»	10	»	»	43
Երրորդ բաժանմունքից	»	28	6	»	7	»	»	41
Երկրորդ »	»	31	7	»	8	»	»	46
Առաջին »	»	24	7	»	2	»	»	33
Գումար	6	226	38	3	47	15	1	336

Այս հաշուից երևում է, որ 100ին 67 փոխադրուել են, 100ին 11 մնացել են դասարաններում, հարիւրին 4 արձակուել են *).

(*) Անցեալ տարի 100ին 62 փոխադրուել էին. 25 — մնացել եւ 8ը — արձակուել.

Այս տարի աւարտեցին իւրեանց ուսման ընթացքը Գ. լսարանից վեց ուսանողներ.

Գեօնջեան Եղովք Ալէքսանդրապոլցի,

Կանայեան Ստեփաննոս Իգդիրցի,

Տէր Բարդուղիմէոսեան Գէորգ Պրուսացի,

Տէր Գաբրիէլեան Սարգիս Քութայիսեցի,

Տէր Մկրտչեան Կարապետ Աղուլեցի,

Տէր Պօղոսեան Պօղոս Ալէքսանդրապոլցի.

Սոցանից Գեօնջեանը և Տէր Պօղոսեանը հրաւիրուեցան Շուշի ուսուցիչ, Տէր Բարդուղիմէոսեանը և Տէր Մկրտչեանը նշանակուեցան ուսուցիչ և վերակացու Ճեմարանում, իսկ Կանայեանը և Տէր Գաբրիէլեանը գնացին արտասահման ուսումը շարունակելու՝ առաջինը իւր հաշուով, իսկ երկրորդը՝ Պ. Աղէքսանդր Մելիք Հայկազեանի, որ իւր սեփական արդիւնքից նշանակել էր 840 ռ. ի տարին և յանձնել էր Ճեմարանիս ուսուցչական ժողովին ընտրել իւր ուսումնաւարտներից մինին արտասահման ուղարկելու համար. միանգամայն խոստանալով որ երբ այս առաջինը աւարտէ իւր ուսման ընթացքը՝ միւսին ուղարկէ ըստ ընտրութեան խորհրդոյ Ճեմարանի. Ուսուցչական ժողովը ընտրեց Տէր Գաբրիէլեանին և պայման կապեց նորա հետ, որ երեք տարուայ ընթացքում նա ուսանի Աստուածաբանական գիտութիւնք և պարտաւորուի իւրաքանչիւր տարուայ փոխարէն մի տարի և կէս ծառայել ուսուցչութեան պաշտօնով Ճեմարանում կամ մի որ և է ազգային ուսումնարանում.

Ի բոլոր սրտէ շնորհակալ ենք Պ. Մելիք Հայկազեանից, որ իւրեան յատուկ առատաձեռնութեամբ հոգացողութիւն է անում Ճեմարանի և մեր ազգային ուսումնարանների համար ուսուցիչներ պատրաստելու. Այո՛, միանգամայն երախտապարտ ենք առ Պ. Մելիք Հայկազեանը և սիրելի է մեզ յուսալ, որ պարոնի գովելի ընթացքին հետևողներ կլինին և մեր այլ մեծատունները, որով կարճ ժամանակուայ ընթացքում կպատրաստուին ընտիր ուսուցիչներ մեր ազգային ուսումնարանների համար. Ապա թէ ոչ այժմ այնքան սահմանափակ է ուսուցչաց թիւը և այնքան մեծ ուսուցիչների կարօտութիւնը, որ մեր ուսումնարանների վարչութիւնները մեծ նեղութիւն են քաշում պակասած ուսուցչաց թիւը լրացնելու համար և շատ անգամ ամենագլխաւոր առարկաներ մնում են առանց աւանդելու՝ ուսուցչաց պակասութեան պատճառով.

Աշակերտաց ներքին կացութեան մասին անցեալ տարի տեղեկագրիս մէջ երկար խօսած լինելով, այժմ կրկնելու միևնոյնը կարևորութիւն չենք համարում. միայն ցաւով պէտք է արձանագրենք այստեղ, որ այս տարի Փետրվարի 2ին վախճանեցաւ մեր երկրորդ դասարանի աշակերտ Երևանցի Ցարութիւն Ցուվակիմեանը, որ վարակիչ տենդով հիւանդանալով մի քանի օրուայ մէջ կնքեց մահկանացուն. Միւս հիւանդները,

չնայելով որ մի քանի ծանր հիւանդութեան դեպքեր ունեցանք, բարեբաղդաբար առողջացան։

ՑՈՒՑԱԿ ԱՇԱԿԵՐՏԱՑ

ԸՍՏ ՏԵՂԱԳՐՈՒԹԵԱՆ.

I ՌՈՒՍԱՍՏԱՆ.

Ա. ՆՈՐ ՆԱԽԻՋԵՒԱՆԻ ԵՒ ԲԵՍՍԱՐԱԲԻԱՅԻ ՎԻՃԱԿ

	Գիշ.	Երթ.
Փիշնև քաղաք.	2	»
Նոր Նախիջևան »	4	»
Նիսվիթա գիւղ.	1	»
Թոփթի »	1	»
Օրբաղար քաղաք	3	»
Ղարասուբազար »	4	»
Օդեսսայ »	1	»
Գումար	16	

Բ. ԱԾԳՈՒՐԽԱՆԻ ՎԻՃԱԿ.

Մոզդոկ քաղաք.	2	»
Ղզլար »	1	»
Ղարաջալիլ գիւղ.	1	»
Նոր Արմաւիր »	2	»
Վլադիկավկազ քաղաք	1	»
Գումար.	7	»

Գ. ՎՐԱՍՏԱՆԻ ԵՒ ԻՄԵՐԵԹԻ ՎԻՃԱԿ.

Տփխիս քաղաք.	3	»
Մանգլիս գիւղ.	1	»
Ջալալողլի »	2	»
Վարդաբլուր »	1	»
Օձուն »	1	»
Դիլիջան »	2	»
Քարվանսարայ »	1	»
Քութայիս քաղաք	2	»
Գուշեթ »	»	1
Սղնախ »	1	1
Ջաքաթալայ »	1	»
Ախալցխա »	4	»
Ծաղրուեթ գիւղ.	1	»
Սուլդա »	1	»
Ցխինվալ »	1	»
Գանձակ քաղաք.	1	»
Գումար	23	2

Դ. ԱՐՁԱԽԻ ՎԻՃԱԿ.

Շուշի քաղաք.	4	»
Հապրուտ գիւղ	1	»
Խլաթաղ »	1	»
Նորշէն »	1	»
Փիրաջամալ »	1	»
Նուխի քաղաք.	2	»
Նիժ գիւղ.	2	»
Վարդաշէն »	2	»
Դաշբուլաղ »	1	»
Գումար	15	»

Ե. ՇԱՄԱԽՈՒ ՎԻՃԱԿ.

Սաղիան գիւղ.	1	»
Խաշմազ »	1	»
Գումար	2	»

Զ. ԵՐԵՒԱՆԻ ՎԻՃԱԿ

Երևան քաղաք.	16	1
Զիդամլու գիւղ	1	»
Ղամարլու »	1	»
Բաշնորաշէն »	»	2
Ալէքսանդրապոլ քաղաք	6	3
Մեծ Ղարաքիլիսա գիւղ	4	»
Հ. Նախիջևան քաղաք	»	4
Աստապատ գիւղ.	1	»
Ագուլիս »	3	»
Փորագաշտ »	1	»
Նորս »	1	2
Տաթև »	2	1
Մեղրի »	1	»
Գարաբաս »	1	»
Քաջարան »	1	»
Բռնակոթ »	2	»
Առաջաձոր »	1	»
Խնձաբէս »	1	»
Ուզ »	»	1
Մարաղեցի »	»	1
Վաղարշապատ »	17	51
Օշական »	1	3
Աշտարակ »	4	1
Բիւրական »	»	1
Փարպի »	»	1

Գուանդանոց »	1	1
Ալիբեկլու »	2	7
Զէյվայ »	3	3
Հաջիլար »	»	1
Աղջաղալա »	1	6
Սամաղար »	1	1
Քեօրփալու »	-	1
Ղուրտուղուլի »	»	1
Գեչրլու »	»	1
Շահրիար -	»	1
Ղուզիգիդան »	1	»
Թալիշ »	1	»
Մարգարագիւղ »	1	»
Հ. Էվջիլար »	1	2
Բլո՛ր »	1	»
Իգդիր »	3	3
Իգդիրմավա »	2	»
Կողբ »	»	1
Գարաբաղար »	1	»
Ալիղամար »	»	1
Ագիաման »	2	2
Ապարան »	4	3
Ախթա »	»	1
Ն. Բայազիտ քաղաք	1	»
Գումար	91	108

Է. ԿԱՐՍԻ ՎԻՃԱԿ.

Կարս քաղաք.	1	»
Ղզլչախչախ գիւղ.	1	»
Գումար	2	»

II ՏԱՃԿԱՍՏԱՆ

Ա. ՏԱՃԿԱ—ՀԱՑԱՍՏԱՆ

Հ. Բայազիտ.	1	2
Ալաշկերտ.	5	»
Արարկեր.	2	»
Երզնկայ.	1	»
Վան.	4	1
Տիգրանակերտ	2	»
Մուշ.	3	1
Գումար	18	4

Բ. ԱՆԱՏՈԼԻԱ.

Պիլիճիկ.	1	»
Իւնիա.	1	»
Պրուսսա.	4	1
Տրապիզոն.	2	»
Շաբին Քարահիսար.	2	»
Աֆիոն Քարահիսար.	1	»
Քեսթայ.	1	»
Նիկոմիդիայ.	2	»
Գումար.	14	»

Գ. ԿԻԼԻԿԻԱ.

Անթափ.	2	»
Գումար.	2	»

Դ. ԵՒՐՈՊԱԿԱՆ ՏԱՃԿԱՍՏԱՆ.

Կ. Պոլիս.	19	2
Ադրիանապոլիս.	1	»
Թոդոսդա.	1	»
Դարդանել.	1	»
Գումար	22	2

III ՊԱՐՍԿԱՍՏԱՆ

Դավրէժ.	3	»
Խոյ.	2	»
Սալմաստ.	1	»
Գումար.	6	»

IV ՌՈՒՄԱՆԻԱ.

Փօրշան.	1	»
Գումար.	1	»

Անցեալ տարի ուրը գրականական ժողով ունեցանք. Այս ժողովներից հինգին Դ. լսարանի ուսանողներից բերանացի առեներարանեցին — Այվազեան Յարութիւնը Ս. Ս. Թարգմանչաց տօնին, Տէր Բարդուղիմէոսեան Գէորգը—Ս.Ս.Թադէոսի և Բարդուղիմէոսի տօնին, Տ. Գաբրիէլեան Սարգիսը—Ս. Ս.Սահակայ և Մեսրոպեայ տօնին, Տէր Պօղոսեան Պօղոսը

Ս. Ս. Վարդանանց զօրավարաց տօնին և Կանայեան՝ Ստեփաննոսը — Ս. Հօր մերոյ Գրիգորի Լուսաւորչի մուտն ի Վիրապն տօնին։

Այս վերջին ժողովը պատուեց իւր ներկայութեամբ Ամենապատիւ Բարձր Սրբազան Տեղակալ Մակար Արքեպիսկոպոսը միաբան Հարց մի քանիսի աջակցութեամբ։

Բացի բանաւոր ատենախօսութիւններից սոյն ժողովներին եղան նաև մասնակցողներ Ա. լսարանից գրաւոր կերպով՝ Խաչատրեան Մանուկ, Պօսնեան Ներսէս, Վարդանեան Կարապետ, Մուրատչեան Նիկողայոս, Տէր Յակոբեան Տիգրան, Սուլթանշահեան Մելքոն, Յովհաննիսեան Տիգրան, Տէր Աւետիքեան Միքայէլ, Տէր Վրթանիսեան Քրիստափոր, Տէր Պետրոսեան Յովսէփ և Զ. դասարանից Մկրտչեան Սարգիս։

Միւս երեք ժողովները տօներից դուրս օրեր էին և նոցա նիւթը Մանկավարժութիւնն էր և Ընդհանուր Պատմութիւնը։ Նոցա մասնակցեցին Բ. Լսարանից՝ Պէքարեան Յակոբ, Ջամինեան Աբրահամ, իսկ Գ. լսարանից՝ Տէր Պօղոսեան Պօղոս։

Անցեալ 1881—2 ուս. տարուայ ուսուցիչներից և վերակացուներից անձնական պատճառներով տարուայ սկզբից թողին Ճեմարանը՝ Գեր. Արիստակէս Եպիսկոպոս Սեդրակեան, Պ. Մարտիրոս Սիմէօնեան, (որի մահուան գուժը մեզ ամենից առանձին ցաւ պատճառեց), Բարսեղ Բաստամեան, Ոսկան Յովհաննիսեան. 1883ի յունվարից՝ Պ. Պ. Բժ. Գրիգոր Տէր Գրիգորեան, Մարտիրոս Քէրեստէճեան, Առաքել Սագինեան և քարտուղար Գարեգին Տէր Արիստակէսեան։

Նոր հրաւիրուեցան՝ Արժ. Եփրեմ Սարկաւագ Սուքիասեան, Պ. Սեդրակ Արարատեան. իսկ Բժշկի պաշտօն վարում էր ժամանակաւորապէս գաւառական Բժ. Տէր Գասպարեանը։

Անցեալ 1882—3 ուս. տարուայ ընթացքում դասատու էին Ճեմարանում.

Գեր. Գրիգոր Եպիսկոպոս Աղափիրեան.

Աստուածաբանութիւն, Կրօն և Ընդհանուր Եկեղեցւոյ Պատմութիւն։

Արժանապատիւ Կիւրեղ Վարդապետ Սրապեան.

Կարգ Աստուածպաշտութեան, Եկեղեցական Տօմար և Հայոց լեզու։

Արժանապատիւ Ղեւոնդ Վարդապետ Յովակիմեան.

Ձայնագրութիւն. նաև վարում էր վերակացութեան պաշտօն։

Պ. Սեդրակ Մանդինեան.

Տրամաբանութիւն, Մանկավարժութիւն, Բարոյական Փիլիսոփայութիւն, Հոգեբանութիւն. նաև ղեկավարում էր վարժոցի երեք բաժանմունքների և Ճեմարանի առաջին դասարանի մէջ մեր լսարանցւոց գործնական պարապմունքները։

Պ. Փիլիպպոս Վարդանեան.

Ընդհանուր և Ռուսաց Գրականութեան Պատմութիւն, Ընդհանուր Պատմութիւն և Գերմաներէն լեզու։

Պ. Ստեփաննոս Պալասանեան.

Հայոց Պատմութիւն և Ֆրանսերէն լեզու։

Պ. Կարապետ Կոստանեան

Պատմութիւն Հայոց Մատենագրութեան, Տեսութիւն Մատենագրութեան, Քննական քերեկանութիւն, Հնախօսութիւն Հայաստանի, Եկեղեցական Մատենագրութիւն և Հայաստանի Աշխարհագրութիւն։

Պ. Սեդրակ Արարատեան.

Մաթեմատիքա և Տիեզերագրութիւն։

Պ. Բժիշկ Գրիգոր Տէր Գրիգորեան.

Բնագիտութիւն, Բնական Պատմութիւն, Բնախօսութիւն և Առողջապահութիւն. նաև վարուժեր բժշկի պաշտօն. (մինչև Յունվար ամիսը)։

Պ. Մանդէն Մանդինեան.

Ռուսաց լեզու, Ռուսաստանի Աշխարհագրութիւն, Ռուսաց Պատմութիւն և Ընդհանուր Աշխարհագրութիւն. նաև վարուժեր վերակացութեան պաշտօն։

Պ. Մարտիրոս Բերբերուճեան.

Գեղագրութիւն (մինչև Յունվար ամիսը)

Պ. Առաքել Սաֆինեան.

Գծագրութիւն և Նկարչութիւն (մինչև Յունվար ամիսը)։

Պ. Ռուբէն Ռուբինեան.

Տաճկերէն լեզու (Տաճկահպատակների համար)։

Պ. Արտաշէս Սամխալեան.

Աւագ վերակացու Ճեմարանի։

Պ. Աղեքսանդր Սիմէօնեան.

Վերակացու.

Պ. Բժ. Եփրեմ Տէր Գասպարեան.

Ճեմարանի բժշկի պաշտօնակատար (Յունվարից)։

Պ. Գարեգին Տէր Արիստակէսեան.

Քարտուղար (մինչև Յունվար ամիսը)։

Տարուայ սկզբին ինձ վերայ մնաց միայն շաբաթական հինգ դաս Հանգաբանութիւնից, Ֆիզիքական Աշխարհագրութիւնից և Թուաբանութիւնից։ Իսկ Յունվարից, երբ Պ. Բժ. Տէր Գրիգորեանը հրաժարուե-

ցաւ իւր պաշտօնից, նորա բոլոր դասերը ծանրացան ինձ վերայ. այնպէս որ 1882—3ի երկրորդ կիսամեակում ես ունէի շաբաթական «21» դաս.

Ուսումնական խորհուրդը խոր տրտմութիւն զգաց լսելով Ճեմարանի Վ.ԵՀ. Հիմնադրի մահուան լուրը անցեալ Դեկտեմբերի 6ին. իսկոյն նիստ կազմեց որոշելու համար թէ Ճեմարանը ինչ մասնակցութիւն պէտք է ունենայ յուղարկաւորութեան հանդիսին և ինչով պէտք է յաւերժացնէ Բարձր Հանգուցելոյ յիշատակը Ճեմարանի մէջ.

Որոշուեցաւ հետևեալը, որ ամենայն ճշտութեամբ կատարուեցաւ.

1. Աշակերտներին դասերից ազատ կացուցանել մինչև Դեկտեմբերի 14ը՝

2. Ամեն առաւօտ և երեկոյ աշակերտաց հետ եկեղեցի յաճախել հոգեհանգստեան կարգին ներկայ լինելու մինչև Դեկտեմբերի 19ը.

3. Մի ծաղկեայ պսակ պատրաստել Ճեմարանի կողմից.

4. Խնդրել Ս. Սինոդից յուղարկաւորութեան հանդիսին Վ.ԵՀ Հանգուցելոյ դագաղը Ճեմարանով անցկացնել և սորա հիւսիսային և հարաւային դռների մօտ հանդիստներ կատարել.

5. Գ. լսարանի ուսանող Կարապետ Տէր Մկրտչեանին յանձնել մի դամբանական պատրաստել.

6. Այսուհետև առ միշտ Հանգուցեալ Վ.ԵՀ. Հիմնադրի անունը յիշատակել աշակերտաց երեկոյեան աղօթքի մէջ այսպէս.

«Տէր Աստուած մեր, յիշեա՛ զՀոգի Հիմնադրի Ճեմարանիս Տ. Գէորգայ Գ. Հանգուցեալ Կաթուղիկոսի ամենայն Հայոց և հանգո՛ զնա ի լոյս երեսաց քոց».

7. Քառասուն օր Ճեմարանի մէջ առաւօտեան և երեկոյեան աղօթքի ժամանակ ասել հանգստեան շարական.

Ճեմարանի ուսումնական խորհուրդը չէր կարող անտարբեր մնալ Թիֆլիզում տօնելիք Մեղու Հայաստանի լրագրի 25ամեայ յօբելեանի առթիւ. ուստի որոշուեցաւ մի շնորհաւորական հեռագիր ուղարկել այդ օրը խմբագրութեանը և ժողովել ուսուցչաց մէջ 250 ռ. քսան և հինգ օրինակ Մեղու ցրուելու համար չքաւոր ուսումնարաններին.

1882—3 ուս. տ. Վարժոցի երթևեկ աշակերտներից ուսումնական պիտոյից համար դրամ ժողովուեցաւ. Այդ գումարի մուտքը և ծախքը պարտք ենք համարում հրատարակել ի գիտութիւն ընդհանրութեան, նշանակելով մուտքի մէջ աշակերտաց անուններն ու ազգա-

նուէրները, նոյա տուած անդորրագրերի համարները և իւրաքանչիւրից ստացած դրամի քանակութիւնը.

ՄՈՒՏՔ.

Թ.

Անդորրագրի №		Կոպ.
1	Սեդրակ Եղիազարեանից	12
2	Սարգիս Խաչատրեանից	12
3	Գրիգոր Յովհաննիսեանից	12
4	Մկրտիչ Ներսիսեանից	18
5	Աւետիս Եղիազարեանից	12
6	Յակովբ Թորոսեանից .	18
7	Նահապետ Յակովբեանից	3
8	Ղազար Տ. Պետրոսեանից	12
9	Կարապետ Կարճիկեանից	12
10	Տիգրան Ենգիբարեանից	18
11	Վախթանգ Դարբինեանից	6
12	Ասքանազ Զաքարեանից	18
13	Վաղարշակ Սահակեանից	12
14	Արտաշէս Մկրտչեանից	6
15	Գեղամ Նաւասարդեանից	6
16	Յարութիւն Գալստեանից	6
17	Աբգար Ստեփանեանից	6
18	Սողոմոն Յովհաննիսեանից	12
19	Միքայէլ Բաբայեանից	12
20	Գեղամ Մաթէոսեանից	18
21	Երուանդ Մամիկոնեանից	18
22	Արշակ Պլուզեանից	12
23	Աբրահամ Գիւլխանդանեանից . . .	12
24	Գարսեւան Մարգարեանից	12
25	Յովհաննէս Իսրայէլեանից	12
26	Ռուբէն Տ. Մկրտչեանից	18
27	Յակովբ Ալիխանեանից	18
28	Կարապետ Յակովբեանից	3
29	Տիգրան Տ. Անտոնեանից	6
30	Յովհաննէս Վարդանեանից	18
31	Գէորգ Ասլանեանից	18
32	Եփրեմ Մ. Նազարեանից	12
33	Ղազար Մ. Նազարեանից	12
34	Վահրամ Պլուզեանից	18
35	Արշակ Յակովբեանից	12
36	Հայրապետ Ղարիբեանից	12
37	Լեւոն Ներսիսեանից	18
38	Տիգրան Տ. Յովհաննիսեանից . . .	12
39	Ռուբէն Ջանիբէկեանից	6
40	Գեդէոն Տ. Իսրայէլեանից	5
41	Բարդուղիմէոս Վարդիկեանից . . .	12
42	Մկրտիչ Բզնունոյ .	18
43	Կարապետ Մարտիրոսեանից . . .	3
44	Երուանդ Տ. Աւետիքեանից	12
45	Ղազար Աղիբէգեանից	12
46	Կարապետ Ասկարեանից	12
47	Աղաբէգ Դաւթեանից	12
48	Յովակիմ Սուքիասեանից	6
49	Մկրտիչ Յովակիմեանից	12
50	Սահակ Նիկողայոսեանից	18
51	Գեղամ Ասլանեանից	12
52	Ստեփան Տ. Յակովբեանից	6
53	Աւետիս Խումարեանից	12
54	Աղաջան Յակովբեանից	6
55	Անդրէաս Գէորգեանից	12
56	Եղիշէ Տ. Յովհաննիսեանից	6
57	Յովսէփ Խաչատրեանից	18
58	Յարութիւն Մելքոնեանից	6
59	Սարիբէգ Սահակեանից	4
60	Աղէքսանդր Ջանիբէկեանից . . .	12
61	Տիգրան Կանայեանից	18
62	Արշակ Յակովբեանից	5
63	Յովսէփ Տ. Մովսիսեանից	10
64	Յակովբ Կարապետեանից	18
65	Ենովք Ջանիբէգեանից	18
66	Պարոյր Յովհաննիսեանից	8
67	Տիգրան Սմբատեանից	5
68	Արամ Արամեանից	18
69	Հմայեակ Անդրէասեանից	18
70	Եղիշէ Անդրէասեանից	6
71	Կիւրեղ Բաբայեանից .	6
72	Միքայէլ Մխիթարեանից	12
73	Յարութիւն Շահոյեանից	18
74	Արտաշէս Տ. Յովհաննիսեանից . . .	12
75	Արսէն Մնացականեանից	6
76	Գասպար Շահոյեանից	18
77	Գրիգոր Վարդանեանից	6
78	Նիկողայոս Տ. Աւետիքեանից . . .	3
79	Տիգրան Խաչատրեանից	12
80	Ահարոն Տ. Մարտիրոսեանից	
81	Ահարոն Վրթանիսեանից	18
82	Յարութիւն Պետրոսեանից	12

83	Կարապետ Երամեանից	12	87	Կարապետ Քոչարեանից	6
84	Յարութիւն Տրդատեանից	6	88	Յակոբ Թունեանից	12
85	Միքայէլ Մարկոսեանից	6		Գումար	1003
86	Հմայեակ Յովհաննիսեանից	6			

№ 71 անդորրագրով ստացած վեց ռուբլին Կիւրեղ Բարայեանից՝ վերադարձուեցան իւրեանն, որովհետև նա չքաւոր էր, ուստի այդ գրամը մուտքից հանելու է . . . 6

Ընդ ամենը 997

ԾԱԽՔ.

	Ռ.	Կ.
Ութը արշին քաթան	1	20
150 արճիճէ թանաքաման . . .	22	50
Վառելափայտ	273	»
2 հատ կողպէք	»	40
Վառարաններ սարքելու . . .	3	»
Խոշոր տառեր կտրտելու և փայտի վերայ կպցնելու .	1	95
Թուղթ № 6 երեսունիններ օղմայ . . .	110	80
Քարեատախտակ 179 հատ . . .	42	25
26 արկղ քարեգրիչ	22	»
4 հատ մատեան	4	80
200 քանոն	20	»
Նստարաններ նորոգելու . . .	15	»
Զորս կուժ	»	60
146 գրքի կազմ	36	50
7 գրոսս մատիտ	30	24
3 » գրչակոթ	17	28
60 արկղ գրիչ	36	»
2 գրվանքայ սպունգ . . .	8	»
20 արկղ թանաքի փոշի . . .	6	
40 օրինակ Դիւցազնական Աշխարհ . .	13	35
40 » Նահապետական » . .	24	55
40 » Ընտանեկան » . .	15	»
100 » Հէնչէլի թուաբանութիւն . .	39	50
55 » Կորֆի Ռուսերէն ձեռնարկ . .	44	85
42 » Դաւթեանի » » . .	18	87
50 » Հիւսուածք » » . .	46	»
1 » Կորֆի ձեռնարկ ուսուցչի համար .	»	70
Մի մետաղեայ կարկին . . .	3	20
Ծառայի	17	»
Ճանապարհածախք և հեռագրեր . . .	57	29
Գումար	931	83

Ծախքը հանելով մուտքից մնում է վաթսուն և հինգ ռուբլի տասնեօթը կոպէկ (65 ռ. 17 կ.), որ փոխանցուեցաւ 1883–4 ուս. տ. հաշուին.

Մենք վերջացնում ենք մեր խօսքը, ցանկալով որ Սինօդի, Վանքի միաբանութեան և Ճեմարանի մէջ եղած բարոյական կապը անխզելի մնայ երկար տարիներ և Ճեմարանը իւր խաղաղ ընթացքով յարատև կեանք ունենայ. Ազգն էլ շարունակ վայելէ այս Նուիրական Տաճարի պտուղները, ստանալով այս տեղից ազգային և բարոյական դաստիարակութեամբ և արդի գիտութիւններով բեղմնաւորուած եկեղեցական պաշտօնեաներ և ընտիր ուսուցիչներ ի փառս Սուրբ Աթոռոյս, ի պարծանս Հայ Ազգի և յանմոռաց յիշատակ Հանգուցեալ Հիմնադրի Ճեմարանիս.

ՏԵՍՈՒՉ ՃԵՄԱՐԱՆԻ Ա. ՆԱՀԱՊԵՏԵԱՆ.

Սեպտեմբերի 24-ին,
1883 —ի.

Կ. ՊՈԼՍՈՅ ՁԱՅՆ

Ամրափակ դռներով նիստ ըրաւ Ազգ. Ժողովը ուրբաթ օր, սեպտեմբերի 23-ին. Ներկայ էին վաթսուն երեսփոխանք և վեց ժամ շարունակ խօսեցան ու վիճեցին. Վիճաբանութեան առարկայն էր Կաթողիկոսական յանձնաժողովոյ տեղեկագիրը. . . .

Յանձնաժողովի տեղեկաբեր Մատթէոս եպիսկոպոս Իզմիրլեան ներկայացոյց մէկ տեղեկագիր մը և մէկ ալ ծրագիր մը. Տեղեկագիրը պատմական հայեցողութիւն մ' էր կաթողիկոսական ընտրութեանց, ձեւակերպութեանց և զանազան ատոնց վերաբերեալ ուրիշ պատմական կէտերու. Կարեւոր և լաւ կերպով գրուած տեղեկագիր մ' էր. Չը մոռանանք ըսել որ Պատրիարք սրբազանը հիւանդ ըլլալով ներկայ չէր ժողովին, նոյնպէս ներկայ չէին պ. Սէրվիչէն ատենապետը և Խորէն սրբազան. Վերջիններս թէպէտ երեսփոխան չէին, բայց իբր անդամ հրաւիրուած էին.

Ահաւասիկ ծրագրին համառօտութիւնը.

Ծրագիրը բաժնուած է երեք մասերու.

Ա. Հիմնական սկզբունք Հայաստանեայց Ս. եկեղեցւոյ.

Բ. Հայրապետական իշխանութիւն Հայաստանեայց եկեղեցւոյ.

Գ. Կանոնք կամ եղանակ ընտրութեան Հայրապետի ամենայն Հայոց.

Ա. մասը բաժնուած է ինը յօդուածներու, որոնց բովանդակութիւնն է.